քարվանսարայում, որի մէջ կային շատ օթեւաններ եւ շտեմարաններ. ամբողջ գետի վրայով, այն է գետի լայնութեամբ, երկու քարվանսարայների մէջտեղ ձգուած էր մի երկաթէ հաստ շղթայ, որի միջոցով բանում էր նաւակը, ինչպէս գործադրւում է եւ այժմ։ Երկու հաստ սիւներից, որ շինուած էին քարվանսարայների առաջ, կապուած էր այդ շղթան, որ ամէն երեկոյ կողպւում էր բանալիով եւ բանալին յանձնւում քաղաքապետին. այս զգուշութիւնը նրա համար էր, որ ոչ ոք, կամ անծանօթ մարդ չկարողանայ յանկարծ կամ գիշերով մտնել քաղաքը։ Այդ կերպով եկաւորներն եւ ապրանքը տեղափոխւում էին Ջուղայի քարվանսարայը, որտեղից ուղարկւում էին Վրաստան, Եւրոպա, Ռուսաստան եւայլն։ Քարվանսարայների եւ սիւների աւերակներն դեռ կանգուն են այսօր։ Այդպէս ամէն կողմից լաւ պատսպարուած էր Ջուղան. գլխաւոր դարպասի բերդի գլխին միշտ հսկում էր մի պահապան, իմաց էր տալիս՝ եթէ որ եւ է վտանգ էր սպառնում քաղաքին. իւրաքանչիւր նոր եկող պէտք է պահապանին յայտնէր իր անունն եւ միայն քաղաքապետի թոյլտուութեամբ կարող էր մտնել։

Ահա մի կողմից Երասխ գետով, միւս կողմից ժայռերով եւ սարերով շրջապատուած մի այսպիսի փոքր զառիվայրի վրայ պարփակուած էր Ջուղան. այդ տեղն այնքան փոքր եւ նեղ է, որ շատ դժուար է հաւատալ թէ այդտեղ 8000 տուն կար, ինչպէս գրւում է.